

ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌԱՆԿՈՒՄ

(1965 թ. հուլիս — դեկտեմբեր)

ԲՈՒՆԴԱՐՈՒՄ

Հուլիսի 6-ին Սոֆիայում տեղի է ունեցել հայերեն լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչների խորհրդակցություն, որտեղ քննարկվել է հայոց լեզվի և գրականության դասավանդման ընդհանուր ծրագիր կազմելու խնդիրը, ինչպես նաև այլ հարցեր:

«Լրարեր», 21 օգոստոսի

Նոյեմբերի 29-ին Սոֆիայի ժողովրդական օպերայի թատրոնի շենքում տեղի ունեցավ հայկական կուլտուրայի տասնօրյակի հանդիսավոր րացումը: Նախագահությունում էին՝ Բուլղարիայի կոմունիստական պարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար, Բուլղարիայի Մինիստրների խորհրդի նախագահ Տոդոր Ժիվկովը, Բուլղարիայի կոմպարտիայի Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, Կենտկոմի քարտուղար Բորիս Վելչևը, Բուլղարիայի արտաքին գործերի մինիստր Իվան Բաշևը, ժողովրդական լուսավորության մինիստր Գանչո Դանևը, Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Լյուբոմիր Կրիստանովը, հասարակական աչքի ընկնող գործիչներ: Տասնօրյակի բացմանը ներկա էր Բուլղարիայում ՍՍՌԿ ղեկավար Ն. Ն. Օրդանովը:

Նիստը բացեց բուլղարա-սովետական բարեկամության համաժողովրդական կոմիտեի նախագահ Յուլա Դրագոյևան: Հայաստանում սովետական իշխանության հաստատման 45-րդ տարեդարձին նվիրված զեկուցումով հանդես եկավ կուլտուրայի և արվեստի կոմիտեի նախագահ Գ. Պետր Վուտովը: Այնուհետև ելույթ ունեցավ Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստր Ռ. Խաչատրյանը: Վերջում տեղի ունեցավ ճոխ համերգ հայ և բուլղար արտիստների կատարմամբ:

Հայկական կուլտուրայի տասնօրյակի կապակցությամբ Սոֆիայում և այլ քաղաքներում կազմակերպվել են հայկական ֆիլմի օր, հայ զրբերի և նկարիչների հատուկ ցուցահանդեսներ: Բուլղար գրողները և երաժիշտները հոգևածներ են տպագրել հայ մշակույթի ներկայացուցիչների մասին, ռադիոն և հեռուստատեսությունը, թերթերն ու հանդեսները հաղորդումներ

ու հոգվածներ են նվիրել հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությանը, Հայաստանի նվաճումներին, տպագրել են բանաստեղծություններ և այլն:

ՌՈՒՄԻՆԻԱ

Բուխարեստում ռումիններն լույս է տեսել «Սասունցի Դավիթ»-ը: Դյուցազնավեպը ռումիններն է թարգմանել Նիկոլայ Թեյթը, ներածությունը գրել է Ալեքսանդրա Պարբրչիլը:

«Նոր կյանք», 13 օգոստոսի

Ռումինիայի կերպարվեստագետների միության հրավերով սեպտեմբերի 20-ին Բուխարեստ ժամանեց Սովետական Միության ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, որը ներկա գտնվեց իր նկարների ցուցահանդեսի բացմանը:

«Նոր կյանք», 24 սեպտեմբեր

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ

Հարավսլավիայում իր արվեստով աչքի է ընկել նկարիչ Միոտրակ Վարդապետյանը, որը 1958 թ. ավարտել է Բելգրադի գեղարվեստների ակադեմիան: Այժմ նա «Լա Ռվյու դը Լա Յուգոսլավիա» գրական և գեղարվեստական ամսաթերթի արվեստի բաժնի խմբագիրն է: Վարդապետյանը մասնակցել է միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների, ինչպես նաև իր նկարների առանձին ցուցահանդեսներ է կազմակերպել Հարավսլավիայի գրեթե բոլոր քաղաքներում:

«Արարատ», 7 օգոստոսի

ԼԻԲԱՆԱՆ

Հռչակավոր օպերային երգչուհի՝ լիբանանահայ Լուիզ Պոսարալյանը (Անահիտ Եղիայան) 1965 թ. հուլիսին Բաալբեքի միջազգային ֆեստիվալում արժանացել է միջազգային մրցանակի:

«Արարատ», 7 օգոստոսի

Բեյրութում սկսել է լույս տեսնել «Հառաջ» նոր շաբաթաթերթը, որը իր խմբագրականում գրում է, թե նա պետք է պայքարի «անհատի

շահադորժման, ազգերու ստրկացման, հյուսիս-կան ափերումի, ազգայնամոլության և մեծապետական շովինիզմի» դեմ: «Հառաք»-ը պետք է պաշտպանի սովետական հայրենիքը, Լիբանանը և սփյուռքահայության շահերը:

«Ջահակիր», 4 նոյեմբերի

Մ Ա Ռ

Մահացել է սփյուռքահայ գրականության անվանի ներկայացուցիչ եզիպտահայ Միքայել Կյուրճյանը:

«Զարթոնք», 16 հուլիսի

Կոհիբեում հայ զեղարվեստասիրաց միության «Թեքեյան» սրահում տեղի է ունեցել Նահապետ Քուշակին նվիրված երեկու: Նահապետ Քուշակի մասին կարգացվել է դասասիրտություն, որից հետո եղել է զեղարվեստական բաժին:

«Զարթոնք», 16 դեկտեմբերի

Ի Բ Ա Ն

Թեհրանում այժմ գոյություն ունեն 26 հայկական զպրոցներ քսան հազար աշակերտներով և հարյուրից ափելի ուսուցիչներով: Թեհրանի հայ բնակչության թիվը կազմում է մոտավորապես ութսուն հազար:

«Զարթոնք», 24 օգոստոսի

Թեհրանում, Թովմասյան եղբայրների նախաձեռնությամբ լույս է տեսել սովետահայ ալպանավոր զրոգ Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վիպակի պարսկերեն թարգմանությունը, որը կատարել է Հարսիկ Թամրազյանը: Պարսիկ գրականագետ զոկտոր Ռեզա Բարահինին զրքի իր առաջարանում գրում է. «Այս թարգմանությունը նշանակալից մի քայլ է՝ հայ գրականությունը Պարսիկ ժողովրդին ծանոթացնելու գործում: Հուսով ենք, որ թարգմանությունների միջոցով հնարավորություն կունենանք հայ գրականությանն ափելի ծանոթանալու»:

«Նոր օր», 3 սեպտեմբերի

Վերջերս Պարսկաստանի կենտրոնական կինոթատրոններում ցուցադրվել է «Մովահարս» կինոնկարը, որի ռեժիսյորը և զլխավոր գերակատարն է հայ դերասան Արմանը:

«Երկիր», 16 հոկտեմբերի

ՇՆԷՅՅԱԼՈՒՄ

Ցյուրիխում բնակվող հայ երիտասարդները հիմնել են հայկական երգչախումբ:

«Աշխարհ», 13 նոյեմբերի

ԱՎՍՏՐԻԱ

Վիեննայի Միխիլայան միաբանության անդամ զոկտ. Վահան Ինկիրիզյանը դերմաներեն լույս է բնծայել «Հայոց գրականություն» աշխատությունը, որտեղ տրված է հայ հին և նոր գրականության համառոտ պատմությունը:

«Զարթոնք», 11 սեպտեմբերի

ՖՐԱՆՍԻԱ

«Լա Քորտ» հրատարակչությունը ֆրանսերեն լույս է բնծայել Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր», «Հացին երգը», «Ցեղին սիրտը» և այլ գործերից կազմված ժողովածու՝ Վահե Կոտելի թարգմանությամբ:

«Լրարեր», 14 օգոստոսի

Սերի Ասմունի-Մուրազյան վարժարանի զրպրոցականներից կազմված հարյուր հոգիանոց երգչախումբը երգահան-խմբավար Բեորգ Յանպեկյանի զլխավորությամբ համերգ է տվել Սերում: Մրազիոր բաղկացած էր Կոմիտասի, Սյունիի, Թ. Ալթունյանի և Յանպեկյանի ստեղծագործություններից:

«Պայքար», 23 հուլիսի

Վենս քաղաքի թանգարաններից մեկում հուլիսի 22-ին բացվեց աշխարհահռչակ հայ նրկարիչ Գառուի (Գառնիկ Զույումյան) փորագրությունների, գծագրությունների և վիմագրությունների ցուցահանդեսը:

«Զարթոնք», 28 օգոստոսի

Հոկտեմբերի 7-ին Փարիզում ֆրանսահայ զրոդների միությունը կազմակերպել է հավաքույթ՝ նվիրված Հովհաննես Շիրազի ծննդյան 50-ամյակին:

«Աշխարհ», 16 հոկտեմբերի

Տաղանդավոր երգչուհի Լիս Սարյանը մասնակցել է «Թելլի-Դիմանչ»-ի մրցանակաբաշխությանը և զրավել առաջին տեղը: Սարյանը հիմնականում նատարում է եվրոպական կոմպոզիտորների գործերը: մեծ հաջողությամբ կատարում է նաև հայկական երգեր:

«Երկիր», 16 հոկտեմբերի

Լիոնում տեղի ունեցած երգիչների 1965 թ. մրցմանը 24 բնտրված երգիչներից առաջին մեծ մրցանակին է արժանացել Մասիս Տեյիրմենճյանը:

«Պայքար», 19 հոկտեմբերի

Ֆրանսահայ մշակութային Միությունը հոկտեմբերի 15-ին Փարիզում Օթելի-Մոդերնի սրա-

հում կաղամակերպել է հուշ-երեկո՝ ի հիշատակ լուսիղա Ասլանյանի (Լաս)։ Երեկոյի նախադասն է եղել Մառի Աթմաճյանը։

«Զահակիր», 28 հոկտեմբերի

Նոյեմբերի 9-ին Սորբոնի մեծ ամֆիթատրոնում Վիկտոր Համարձումյանին է հանձնվել «Դոկտոր Հոնորիս Կաուղա» պատվավոր կոչումը։ Արարողությանը ներկա էին կրթական նախարար Ֆուլեն, օտարերկրյա դեսպաններ, ակադեմիկոսներ, մտավորականներ։ Գիտությունների կաճառի ավագ անդամ պրոֆ. Մարկ Զամանոկին հարգանքով ու համակրանքով լի ջերմ ելույթ ունեցավ այս կապակցությամբ։

«Աշխարհ», 13 նոյեմբերի

Փարիզում նշվել է Սովետական Հայաստանի 45-րդ տարեդարձը։ Ժողովին ներկա են գտնվել բաղամթիվ հայեր, ֆրանսիացիներ, ինչպես նաև Փարիզի սովետական դեսպանատան ներկայացուցիչները։ Նիստում խոսվել է Հայաստանի տնտեսական ու մշակութային զարգացման մասին։ Վերջում տրվել է համերգ։

«Բյուրական», 8 դեկտեմբերի

ԻՏԱԼԻԱ

Միլանում իտալերեն լույս է տեսել իտալացի պատմաբան պրոֆ. Լուարո Մայնարտիի «Հայաստանը երեք աշխարհների և երկու աշխարհամասերի քառուղու վրա» խորագրով աշխատությունը՝ նվիրված հայ ժողովրդի հին ու նոր պատմությանը և կուլտուրայի զարգացմանը։

«Աշխարհ», 9 հոկտեմբերի

ԱՆԳԼԻԱ

Ականավոր հայ նկարիչ Արշիլ Գորկիի (Ոստանիկ Մանուկ Ասոյան) նկարները մի ամբողջ ասիս ցուցադրվել են Լոնդոնում և արժանացել բարձր գնահատականի։

«Պայքար», 23 հուլիսի

Լույս է տեսել Սիրարիի Տեր-Ներսեսյանի «Աղթամարի ս. Խաչ եկեղեցին» վերնագրով աշխատությունը՝ անգլերեն։ Գրքին կցված է աշխարհագրական քարտեզ և եկեղեցու հատակագիծը, բաղկացած է 138 էջից, պարունակում է 77 մեծադիր նկարներ։

«Զարթոնք», 24 օգոստոսի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

«Սևան» հրատարակչական տան տնօրեն Ս. Սիմոնյանը ձեռնարկել է հրատարակել հայ հին և նոր գրականությունը հինգ հատորներով՝ 1. Հայ հին գրականություն (V—XIX դար), 2.

Արևմտահայ գրականություն (1850—1915), 3. Արևելահայ գրականություն (1850—1920), 4. Խորհրդահայ գրականություն (1921—1965), 5. Գաղթահայ գրականություն (1918—1965)։

Առայժմ լույս է տեսել երրորդ՝ «Արևելահայ գրականություն» հատորը (628 էջ), որը սկսվում է Մեսրոպ Թաղիադյանով և վերջանում Վահան Տերյանով։ Հատորին կցված է ընդարձակ բառարան և օգտագործված աղբյուրների մանրամասն մատենագիտություն։

«Զարթոնք», 10 հուլիսի

Իուենոս-Այրեսում լույս է տեսել Աշոտ Արծրունու «Հայ ժողովրդի պատմություն»-ը իսպաներեն։ Գիրքը բաղկացած է 450 էջից, ունի 17 քարտեզ և մոտ 100 նկար։

«Պայքար», 20 օգոստոսի

Իուենոս-Այրեսի Օդեոն թատրոնում սեպտեմբերի 6-ին տեղի է ունեցել հանրաճանաչ «Արաքս» երգչախմբի համերգը։ Համերգի ծրագիրը բաղկացած էր Եկմալյանի, Կարա-Մուրզայի, Կոմիտասի և ուրիշների ստեղծագործություններից։ Խմբավարն է Ժան Ալմուխյանը։

«Սևան», 15 սեպտեմբերի

Արգենտինահայ մշակութային միությունը օգոստոսի 21-ին հանդիսավորությամբ նշել է հայ ժողովրդի հերոս Անդրանիկի ծննդյան հարյուրամյակը։

«Սևան», 15 սեպտեմբերի

Իուենոս-Այրեսում դոկտ. Խոսե Արսեի նախագահությամբ հիմնվել է արգենտինահայկական մշակութային հիմնարկություն, որի նըպատակն է. 1. Ուսումնասիրել հայ ժողովրդի անցյալ ու ներկա մշակույթը։ 2. Ծանոթացնել արգենտինացիներին Հայաստանին, հայ ժողովրդին ու նրա մշակույթին։ 3. Փոխադարձաբար հայ ժողովրդին ծանոթացնել Արգենտինայի պատմությանն ու մշակույթին։

«Զարթոնք», 16 սեպտեմբերի

Իուենոս-Այրեսում լույս է տեսել Հրանգ Թորոսյանի «Հայ դատի պատմություն»-ը իսպաներեն՝ Գևորգ Սարաֆյանի թարգմանությամբ։ Առաջաբանը գրել է Լուի Մառեն։ Գրքում գետնի վրա են նկարներ և երկու քարտեզ։

«Աշխարհ», 18 սեպտեմբերի

ՈՒՐՈՒԳՎԱՅ

Ուրուգվայի հայ կենտրոնի Երևան երիտ. միությունը հաջողությամբ ներկայացրել է Հ. Պարոնյանի «Շողոքորթը»։ Գլխավոր գերակա-

տարներն են եղել Ռինաս խուլեյանը և Նուպար Պալիկյանը:

«Սեան», 1 սեպտեմբերի

Ա Մ Ն

Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի աշխատակիցներ Ծ. Սարգսյանի և Ռ. Սահակյանի «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» աշխատությունը լույս է տեսել անգլերեն՝ Բոստոնի համալսարանի պրոֆեսոր Եղիշե Զրաքյանի թարգմանությամբ:

«Աշխարհ», 10 հուլիսի

Նյու-Յորքում տեղի հայերի կողմից պատրաստվել է մեծ եղեռնը պատկերող «Երբեք կենդանու ալ թշնամիքն Արմիններն» անունով վավերական ու պատմական կինոնկարը՝ անգլերեն, հայերեն և արաբերեն տարբերակներով: Երաժշտությունը՝ Բոստոնի «Կոմիտաս» երգչախմբի՝ Ռուբեն Գրիգորյանի ղեկավարությամբ:

«Ջահակիր», 29 հուլիսի

Նյու-Յորքի «Հարրի Ապրահամս» հրատարակչությունը անգլերեն լույս է ընծայել Սովետական Հայաստանի անվանի արվեստագետ Լ. Դուրնովոյի «Հայկական մանրանկարչությունը» Գիրքը թարգմանված է ֆրանսերենից, որը լույս

էր տեսել Փարիզում դեռևս 1960 թ.: Գրքի ֆրանսերեն թարգմանության առաջարկը դրել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Սիրարփի Տեր-Ներսեսյանը: Այգ նույն առաջարկը թարգմանված է անգլերեն հրատարակությանը:

«Նոր կյանք», 17 սեպտեմբերի

Հյուսիսային Ամերիկայում Ջոն Քյուրքճյանը և Մայքլ Հակոբյանը ստեղծել են «Ուր է իմ ժողովուրդը» կինոնկարը՝ նվիրված մեծ եղեռնի հիսնամյակին:

«Զարթոնք», 23 սեպտեմբերի

Լոս Անջելոսի Հայ կրթական տան վարչությունը և նրան օժանդակ Տիկնանց միությունը վերաբացել են տարիներ առաջ ստեղծված հայկական գրադարանը:

«Հրաբեր», 16 նոյեմբերի

Ամերիկահայ Ազգային խորհրդի Դետրոյտի մարմնի նախաձեռնությամբ և հայրենասեր կազմակերպությունների ու հայրենակցական միությունների մասնակցությամբ նոյեմբերի 21-ին տոնվել է Սովետական Հայաստանի 45-րդ տարեդարձը:

«Հրաբեր», 7 դեկտեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ 100 ՏԱՐՈՒՄ

Եգիպտական առաջին պարբերականը՝ «Արմավենի»-ի լույս ընծայման 100 տարին: Այն լույս է տեսել 1865 թ. մարտի 16-ին: Նրա խմբագիրը՝ Աբրահամ Մուրատյանը, նշանակալից դեմք է հայ լրագրության պատմության մեջ: Դեռ 1850 թ. նա մեծ զրկանքներով և առնչանքներով հրատարակել է Նիկոմեդիայի առաջին լրագիրը՝ «Հայրենասեր»-ը, իսկ 1855 թ. Փարիզում լույս է ընծայել «Փարիզի անունով թերթը: Եգիպտոսում մի քանի տարի «Արմավենի»-ն հրատարակելուց հետո, հիվանդության պատճառով, Ա. Մուրատյանը ստիպված անցել է Կ. Պոլիս, որը որոշ ժամանակ խմբագրել է Հար. Ավանյանի «Մեղու»-ն:

Եգիպտական լրագրության 100-ամյակի առիթով այստեղ տալիս ենք այդ ժամանակվա ընթացում եգիպտոսում լույս տեսած ավելի քան 90 հայ պարբերականների ցուցակը: Հնա-

րավոր է, որ լինեն նաև մեր առաջադից-վրիպածներ: Սակայն շնայած իր որոշ թերություններին, այս ցուցակը մինչև հիմա լույս տեսածների մեջ ամենից ընդարձակն է:

Արմավենի: Լրագիր կիսամյա, քաղաքական, ազգային և բանասիրական: Խմբագիր՝ Աբրահամ Մուրատյան: Կա՛հիրե, 1865, 4 էջ:

Նեզու: Շաբաթաթերթ, Խմբագիր՝ Անտոն Բշաունի: Ազգասերական, 1888—1889, 4 էջ:

Փառու: Եռօրյա լրագիր, գրական, զավեշտական: Խմբագիր-տնօրեն՝ Հ. Ալֆիար և Տ. Արփիարյան: Կա՛հիրե, 1896—1898 (նաև 1901—1902):

Արշալույս: Գրական և քաղաքական անկախ հայաթերթ, օրգան Ազգային անկախ միության: